ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

«15» «05» 2024 թվականի N 6 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ

«03» «Մայիս» 2024 թվականի N156 - Ն

ՀԱՄԱՏԵՂ ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 24-Ի N 6-Ն ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 17-Ի N 409-Ն ՀԱՄԱՏԵՂ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին և 34-րդ հոդվածի 7-րդ մասի դրույթներով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՆՔ՝

1. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի 2022 թվականի նոյեմբերի 24-ի և Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարի 2022 թվականի նոյեմբերի 17-ի «Անտառներում և բնության հատուկ պահպանվող տարածքներում հրդեհների արձագանքման պլանի օրինակելի ձևը սահմանելու մասին» N 6-Ն և N 409-Ն համատեղ հրամանի (այսուհետ՝ Հրաման) նախաբանում ««ե5»» բառը փոխարինել «10-րդ» բառով:

2. Հրամանի հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Վ. ՂԱԶԱՐՅԱՆ

Հ. ՍԻՄԻԴՅԱՆ

5/3/2024

ՀԱԿՈԲ ՍԻՄԻԴՅԱՆ

Signed by: SIMIDYAN HAKOB 3004840588

«15» մայիսի 2024թ.
ք.Երևան

«03» մայիսի 2024թ.
ք. Երևան

Հավելված
Ներքին գործերի նախարարի
2024 թ. 05 «15»-ի N 6-Ն և
Շրջակա միջավայրի նախարարի
2024 թ. մայիսի «03»-ի N156-Ն
համատեղ հրամանի

«Հավելված
Արտակարգ իրավիճակների նախարարի
2022 թ. նոյեմբերի «24»-ի N 6-Ն և
Շրջակա միջավայրի նախարարի
2022 թ. նոյեմբերի «17»-ի N 409-Ն
համատեղ հրամանի

ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎ
ԱՆՏԱՌՆԵՐՈՒՄ ԵՎ ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ՀՐԴԵՀՆԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ՊԼԱՆԻ

1. Պետական անտառներում, անտառային հողերում և բնության հատուկ պահպանվող տարածքներում հրդեհային անվտանգության նկատմամբ հսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության էկոպարեկային ծառայությունը (այսուհետ՝ Ծառայություն), որն իր գործունեությունը կազմակերպում և իրականացնում է մարզային ստորաբաժանումների տեղամասերի (այսուհետ՝ տեղամաս) միջոցով:

2. Սույն հավելվածի Աղյուսակ N 1-ում լրացվում է տեղամասի բնութագիրը (տարածքի ընդհանուր մակերեսը, տարածքում առկա ծառատեսակները): Աղյուսակ N 1-ից հետո կցվում է տարածքի քարտեզը:

Աղյուսակ N 1

ԲՆՈՒԹԱԳԻՐ
ՏԵՂԱՄԱՍԻ

Տեղամասը	Անտառտնտեսությունը,	Համայնքը	Տարածքի	Տարածքում առկա

	անտառպետությունը, պահաբաժինը, բնության հատուկ պահպանվող տարածքը, տեղամասը		ընդհանուր մակերեսը(հա)	ծառատեսակները
1	2	3	4	5

3. Տեղամասի տարածքներում բռնկված հրդեհաշիջման ղեկավարման պատասխանատուների վերաբերյալ տվյալները լրացվում են Աղյուսակ N 2-ում:

Աղյուսակ N 2

ՏՎՅԱԼՆԵՐ
ՀՐԴԵՀԱՇԻՋՄԱՆ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԻ

N	Պատասխանատու անձի անունը, ազգանունը, հայրանունը	Պաշտոնը	Պատասխանատու անձի հեռախոսահամարը
1	2	3	4

4. Տեղամասի կողմից հրդեհաշիջում իրականացնող ստորաբաժանումների, հրդեհաշիջմանը մասնակցող աշխատակիցների, հրդեհաշիջման միջոցների (առկա տրանսպորտային միջոցների, տեխնիկայի քանակի, այդ թվում նաև անտառային հրդեհների մարման համար նախատեսված տեխնիկական միջոցների քանակի ու տեսակի՝ հրշեջ ավտոմեքենաներ, հրշեջ մոտոպոմպեր, փողակներ, փողրակներ, ձեռքի պարզագույն գործիքներ՝ հեղուկացիր ուսապարկ սրսկիչներ, կտրող գործիքներ, կրակին հարվածող գործիքներ և այլն) և վառելանյութի պաշարի առկայության վերաբերյալ տեղեկությունը լրացվում է Աղյուսակ N 3-ում:

Աղյուսակ N 3

ՑԱՆԿ
ՏԵՂԱՄԱՍԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԴԵՀԱՇԻՋՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀՐԴԵՀԱՇԻՋՄԱՆԸ ՄԱՍՆԱԿՑՈՂ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ, ՀՐԴԵՀԱՇԻՋՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՎԱՌԵԼԱՆՅՈՒԹԻ ՊԱՇԱՐԻ

N	Տեղամասի անվանումը	Տեղակայման վայրը և հեռախոսահամարները	Հրդեհաշիջմանը մասնակցող աշխատակիցների թիվը	Հրդեհաշիջման միջոցները և քանակը	Վառելանյութի պաշարի առկայությունը
1	2	3	4	5	6

5. Տեղամասի տարածքներում բռնկված հրդեհներին արձագանքող Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության (այսուհետ՝ ՆԳՆ) փրկարար ծառայության (այսուհետ՝ ՓԾ) ստորաբաժանումների ցանկը լրացվում է Աղյուսակ N 4-ում:

Աղյուսակ N 4

ՑԱՆԿ
ՏԵՂԱՄԱՍԻ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԲՌՆԿՎԱԾ ՀՐԴԵՀՆԵՐԻՆ ԱՐՁԱԳԱՆՔՈՂ ՆԳՆ ՓԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ

N	Ստորաբաժանման անվանումը և տեղակայման վայրը	Ստորաբաժանման ղեկավարի պաշտոնը, անունը, ազգանունը	Հեռախոսահամարները	Ստորաբաժանման տրամադրության տակ գտնվող տեխնիկական միջոցները
1	2	3	4	5

6. Տեղամասի տարածքում և հարակից բնակավայրերում գտնվող ջրաղբյուրների կոորդինատները, դրանցից օգտվելու հնարավորությունների մասին տեղեկությունը լրացվում է Աղյուսակ N 5-ում:

Աղյուսակ N 5

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ
ՏԵՂԱՄԱՍԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՋՐԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԿՈՈՐԴԻՆԱՏՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

N	Տարածքում և հարակից բնակավայրերում գտնվող ջրաղբյուրների կոորդինատները	Ջրաղբյուրներից օգտվելու հնարավորությունները (օդային, ցամաքային)	Ջրի պաշարների առկայությունը (հայելային մակերեսը, խորությունը)
1	2	3	4

7. Տեղամասի տարածքի առկա ճանապարհների, դրանց բնութագրի, երթևեկելու հնարավորությունների, հանքայնացված շերտերի և պատասխանատուների տվյալները լրացվում են Աղյուսակ N 6-ում: Ճանապարհների քարտեզների

էլեկտրոնային տարբերակները նախապես փոխանցվում են ՆԳՆ ՓԾ Ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնին (այսուհետ՝ ՃԿԱԿ):

Աղյուսակ N 6

ՏՎՅԱԼՆԵՐ
ԱՌԿԱ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ, ԴՐԱՆՑ ԲՆՈՒԹԱԳՐԻ, ԵՐԹԵՎԵԿԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱՆՔԱՅՆԱՑՎԱԾ ՇԵՐՏԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ճանապարհների առկա վիճակը				Հանքայնացված շերտերը			Պատասխանատու անձի տվյալները(անուն, ազգանուն, հայրանուն, հեռախոսահամար)
Երկարությունը(կմ)	Լայնությունը(մ)	Ծածկույթը	Երթևեկելու հնարավորությունները	Առկայությունը	Երկարությունը(կմ)	Լայնությունը(մ)	
1	2	3	4	5	6	7	8

8. Տեղամասի տարածքում բռնկված հրդեհների մարմանը ներգրավված անձանց սննդով, խմելու ջրով ապահովելու և անհրաժեշտության դեպքում՝ առաջին բուժօգնություն ցուցաբերելու հնարավորությունների մասին տեղեկությունը լրացվում է Աղյուսակ N 7-ում:

Աղյուսակ N 7

ՀՐԴԵՀՆԵՐԻ ՄԱՐՄԱՆԸ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՍՆՆԴՈՎ, ԽՄԵԼՈՒ ՋՐՈՎ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԵՎ ԱՌԱՋԻՆ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սննդով, խմելու ջրով ապահովելու հնարավորությունները	Առաջին բուժօգնություն ցուցաբերելու հնարավորությունները
1	2

9. Տեղամասի տարածքում բռնկված հրդեհներին հարակից համայնքի բնակչությանը ներգրավելու և տեղական ինքնակառավարման մարմինների հետ փոխհամագործակցության հնարավորությունների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկությունները լրացվում են Աղյուսակ N 8-ում:

Աղյուսակ N 8

ՏԵՂԱՄԱՍԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԲՌՆԿՎԱԾ ՀՐԴԵՀՆԵՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Տեղամասը	Հարակից համայնքը	Համայնքի բնակչության ներգրավվածությունը(արձագանքողների քանակը)	Տեղական ինքնակառավարման մարմինների հետ փոխհամագործակցությունը ուժերի և միջոցների ներգրավվածության մասին	
			տեսակը	քանակը
1	2	3	4	5

10. Տեղամասի կողմից տվյալ տարում նախատեսվող հրդեհային անվտանգության բարելավմանն ուղղված միջոցառումների մասին տեղեկությունը լրացվում է Աղյուսակ N 9-ում:

Աղյուսակ N 9

ՏՎՅԱԼ ՏԱՐՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

N	Հրդեհային անվտանգության բարելավմանն ուղղված միջոցառումները	Միջոցառումների իրականացման ժամկետը
1	2	3

11. Տեղամասի տարածքներում ուղղաթիռների համար ժամանակավոր հատկացված վայրէջքային հրապարակների առկայության և կոորդինատների մասին տեղեկությունը լրացվում է Աղյուսակ N 10-ում:

Աղյուսակ N 10

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ
ՈՒՂՂԱԹԻՌՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՎԱՅՐԷՋՔԱՅԻՆ ՀՐԱՊԱՐԱԿՆԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՈՐԴԻՆԱՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Տեղամասը	Ուղղաթիռների համար ժամանակավոր վայրէջքային հրապարակների առկայությունը և կոորդինատները
1	2

12. Տեղամասի տարածքում բջջային և ինտերնետ կապի առկայության, հասանելիության, ինչպես նաև հսկողական կետերի և դրանց պատասխանատու անձի տվյալները լրացվում են Աղյուսակ N 11-ում:

Աղյուսակ N 11

ՏՎՅԱԼՆԵՐ
ԲՋՋԱՅԻՆ ԵՎ ԻՆՏԵՐՆԵՏ ԿԱՊԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ, ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ, ՀՍԿՈՂԱԿԱՆ ԿԵՏԵՐԻ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

N	Բջջային և ինտերնետ կապի առկայությունը (օպերատորի անվանումը)	Կապի հասանելիությունը(տոկոսով)	Հսկողական աշտարակները և այլ միջոցները	Հսկողական կետերի պատասխանատու անձի տվյալները (անուն, ազգանուն, հայրանուն, հեռախոսահամար)
1	2	3	4	5

13. Տեղամասի տարածքի հանգստյան գոտիներում և զբոսաշրջության երթուղիներում հրդեհային անվտանգության բարելավման ուղղությամբ իրականացված միջոցառումների (տեղադրվել են հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցվել են պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն) մասին տեղեկությունը լրացվում է Աղյուսակ N 12-ում:

Աղյուսակ N 12

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆԳՍՏՅԱՆ ԳՈՏԻՆԵՐՈՒՄ ԵՎ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԵՐԹՈՒՂԻՆԵՐՈՒՄ ՀՐԴԵՀԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

N	Հանգստյան գոտին	Հրդեհային անվտանգության բարելավման ուղղությամբ

	(զբոսաշրջության երթուղին)	իրականացված միջոցառումները			
		Հրդեհաշիջման սկզբնական միջոցների տեղադրում	Պաստառների փակցնում	Ուղեցույց-հիշեցումների փակցնում	Այլ
1	2	3	4	5	6

14. Տեղամասի տարածքներում բռնկված հրդեհների մարմանն անմիջապես ներգրավվում են համապատասխան տեղամասի ուժերն ու միջոցները: Հրդեհաշիջման աշխատանքները ղեկավարում է համապատասխան տեղամասի հրդեհաշիջման համար պատասխանատու պաշտոնատար անձը: Եթե ներգրավված ուժերին չի հաջողվում մարել հրդեհը, ապա հրդեհաշիջման աշխատանքներին ներգրավվում են ՆԳՆ ՓԾ ստորաբաժանումները: Հրդեհաշիջման աշխատանքները սկզբնական փուլում ղեկավարում է ՓԾ համապատասխան մարզային փրկարարական վարչության պետը կամ նրան փոխարինող անձը: Հետախուզության արդյունքների և հրդեհների ծավալներից ելնելով, հրդեհաշիջման ղեկավարը ստեղծված իրավիճակի վերաբերյալ զեկուցում է ՓԾ վերադաս պետին, որից հետո որոշում է կայացվում հրդեհաշիջման աշխատանքներին Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության, ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների ու մոտակա համայնքների բնակչությանը ներգրավելու վերաբերյալ: ՓԾ-ի կողմից հրդեհաշիջման ղեկավարը, ստանալով անտառային հրդեհի մասին հաղորդագրությունը, անհապաղ միջոցներ է ձեռնարկում արդյունավետ հրդեհաշիջման աշխատանքների կազմակերպման ուղղությամբ: Անտառային կամ բնության հատուկ պահպանվող տարածքի անվտանգ տեղամասում ծավալվում է օպերատիվ շտաբ, որի կազմում ընդգրկվում են լիազոր մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ: Նշանակվում են հրդեհաշիջման աշխատանքների տեղամասերի ղեկավարներ, նրանց ենթակայությանը տրամադրվում են ուժեր և միջոցներ: Ուժերի և միջոցների ներգրավումը իրականացվում է ՆԳՆ ՓԾ ՃԿԱԿ-ի միջոցով:

15. Տեղամասի տարածքում հրդեհավտանգության հսկողությանն ուղղված միջոցառումների իրականացման ցանկը լրացվում է Աղյուսակ N 13-ում:

Աղյուսակ N 13

ՑԱՆԿ
ՀՐԴԵՀԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

N	Միջոցառման անվանումը	Իրականացման ժամկետը	Պատասխանատու անձը (անուն, ազգանուն, հայրանուն, հեռախոսահամար)

1	2	3	4

16. Տեղամասի տարածքներում պարեկության (շրջայցի) կազմակերպման վերաբերյալ տեղեկությունը լրացվում է Աղյուսակ N 14-ում:

Աղյուսակ N 14

ՊԱՐԵԿՈՒԹՅԱՆ (ՇՐՋԱՅՑԻ) ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

N	Պարեկություն (շրջայցի) իրականացնող մարմինը	Պարեկության (շրջայցի) ձևը (օդային, ցամաքային)	Տարածքը, որտեղ իրականացվում է պարեկություն (շրջայցի)	Պարեկության (շրջայցի) իրականացման ժամանակահատվածը	Պատասխանատու անձը (անուն, ազգանուն, հայրանուն, հեռախոսահամար)
1	2	3	4	6	7

17. Տեղամասի տարածքների հրդեհների վերաբերյալ ահազանգերի ստացումը և հաշվառումը լրացվում է Աղյուսակ N 15-ում:

Աղյուսակ N 15

ՀՐԴԵՀՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՀԱԶԱՆԳԵՐԻ ՍՏԱՑՈՒՄԸ ԵՎ ՀՐԴԵՀՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

N	Հրդեհների վերաբերյալ ահազանգեր ստացող և հաշվառող մարմինը	Տեղեկատվության ընդունման ձևը և կոնտակտային տվյալները
1	2	3

18. Տեղամասի տարածքներում բռնկված հրդեհների վերաբերյալ տեղեկատվությունը ՆԳՆ փոխանցող անձանց ցանկը լրացվում է Աղյուսակ N 16-ում:

Աղյուսակ N 16

ՑԱՆԿ
ՀՐԴԵՀՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՆԳՆ ՓՈԽԱՆՑՈՂ ԱՆՁԱՆՑ

Տեղամասը	Պատասխանատու անձի անունը, ազգանունը, հեռախոսահամարը
1	2

19. Տեղամասի տարածքների հրդեհների վերաբերյալ ՆԳՆ փոխանցվող ամփոփ տեղեկատվությունը լրացվում է Աղյուսակ N 17-ում:

Աղյուսակ N 17

ՏԵՂԱՄԱՍԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԲՌՆԿՎԱԾ ՀՐԴԵՀՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԳՆ ՓՈԽԱՆՑՎՈՂ ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

1	Հրդեհի առաջացման մասին տեղեկանալու ժամը	
2	Հրդեհի մասին ՆԳՆ հայտնելու ժամը	
3	Հրդեհի մասին հայտնող անձի տվյալները	
4	Հրդեհի առաջացման վայրը	
5	Վարչական տարածքի անվանումը, որտեղ առաջացել է հրդեհը	
6	Տեղամասի տարածքի անվանումը, որտեղ առաջացել է հրդեհը	
7	Հրդեհի տարածքին մոտ բնակավայրերի անվանումը	
8	Մոտակա հրշեջ-փրկարարական ջոկատների տեղակայման վայրը	
9	Մոտակա ջրաղբյուրների առկայությունը և գտնվելու վայրը	
10	Հրդեհաշիջման սկզբնական ղեկավարի տվյալները	
11	Հրդեհի սկզբնական մոտավոր մակերեսը (հա)	
12	Հրդեհի հետևանքով այրված մակերեսը (հա)	
13	Հրդեհաշիջման աշխատանքները սկսելու օրը և ժամը	
14	Հրդեհի մեկուսացման օրը և ժամը	
15	Հրդեհի մարման օրը և ժամը	
16	Հրդեհաշիջման աշխատանքների ավարտման ժամը	
17	Հրդեհաշիջմանը ներգրավված ուժերն ու միջոցները	

20. ՆԳՆ ՓԾ ստորաբաժանումների անձնակազմի կողմից հրդեհաշիջման աշխատանքների իրականացման նպատակով կարիքներին վերաբերող յուրաքանչյուր պահանջ ապահովում է ՆԳՆ համապատասխան ստորաբաժանումը:

21. Անտառային և բնության հատուկ պահպանվող տարածքներում արդյունավետ հրդեհաշիջում իրականացնելու նպատակով, կապը կազմակերպվում է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի, նախարարի տեղակալների, ՓԾ տնօրենի օպերատիվ շտաբի, հրդեհաշիջման շտաբի, հրդեհաշիջման տեղամասերի, ՓԾ ՃԿԱԿ-ի, մարզային ճգնաժամային կառավարման կենտրոնների միջև, ռադիոկայանների, բջջային և ֆիքսված կապի միջոցներով: Կապը կազմակերպվում է նաև Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի և ՓԾ տնօրենի շարժական կառավարման կետերի հետ:

22. Անտառային և բնության հատուկ պահպանվող տարածքներում հետախուզությունն իրականացվում է հրդեհաշիջման ղեկավարումը ստանձնած ՓԾ պաշտոնատար անձի գլխավորությամբ՝ տեղամասի ներկայացուցչի մասնակցությամբ: Հետախուզությունը կարող է կատարվել ինչպես օդային, այնպես էլ ցամաքային եղանակով: Հետախուզության ընթացքում ձեռք բերված տվյալները վերլուծվում և զեկուցվում են ըստ վերադասության՝ ՓԾ կողմից հրդեհաշիջման ղեկավարին, ՓԾ տնօրենին և Ներքին գործերի նախարարին և փոխանցվում են ՓԾ ՃԿԱԿ-ին:

23. Անտառներում և բնության հատուկ պահպանվող տարածքներում հրդեհների արձագանքման պլանները մշակվում են Ծառայության կողմից և յուրաքանչյուր տարի մինչև մարտի 31-ը ներկայացվում են ՆԳՆ ՓԾ համապատասխան տարածքային ստորաբաժանման համաձայնեցմանը»: